

ԴՈԿՏ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ԴՈՒՍՏՐ ՎԵՐՈՆԻԿԱ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Այս տարի, սեպտեմբերի 7-ին, Վերոնիկա Լեփսիուսը հյուրաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Նրա խնդրանքով այդ օրը Մայր տաճարում, ս. պատարագից հետո, Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ դոկտ. Լեփսիուսի հիշատակին:

Վերոնիկա Լեփսիուսը Գերմանիա վերադառնալուց հետո, իր նամակով երախտագիտություն և շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ իր հոր նկատմամբ ցուցաբերված ազնիվ ու քրիստոնեական վերաբերմունքի համար:

Հովհաննես Լեփսիուսը (1858—1926) գերմանացի հոգևորական էր, վերապատվելի, հասարակական գործիչ և արևելագետ: Նա եղել է հայ ժողովրդի անկեղծ և հավատավոր բարեկամը և որպես այդպիսին երկար տարիներ զբաղվել է հայկական հարցով, փաստեր է հավաքել ու հրատարակել Արևմտյան Հայաստանում թուրք կառավարության կողմից 1895—1915 թվականներին ի գործ դրված հայաջինջ քաղաքականության և ցեղասպանության մասին:

Հայկական կոտորածների մասին 1896 թվականին նրա հրատարակած առաջին գործը կոչվում է «Հայաստան և Եվրոպա»:

1916 թվականին դոկտ. Հովհաննես Լեփսիուսը հրատարակել է իր երկրորդ գործը, որը կոչվում է «Տեղեկագիր հայ ժողովրդի դրության մասին»:

Դոկտ. Լեփսիուսը 1914—1926 թվականներին եղել է Գերմանո-Հայկական Ընկերության նախագահը: Այդ հանգամանքով նա 1919 թվականին հրատարակել է «Գերմանիան և Հայաստանը 1914—1918 թվականներին» գիրքը, որի մեջ քաջաբար մերկացրել է կայզերական Գերմանիայի մեղսակցությունը հայկական կոտորածների մեջ:

1921 թվականին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանի ծանոթ դատավարության առթիվ դոկտ. Լեփսիուսը, որպես վկա, հանդես է եկել ի պաշտպանություն Թեհլերյանի:

Դոկտ. Հովհաննես Լեփսիուսը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին իր հայասեր գործունեության համար արտաքսվել է իր հայրենիքից՝ Գերմանիայից, և դարձել վտարանդի:

Հայ ժողովուրդը խոր երախտագիտությամբ է պահում իր սրտում իր ազնիվ և անկեղծ բարեկամի անմոռաց հիշատակը:

Այժմ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Վերոնիկա Լեփսիուսի նամակի հայերեն թարգմանությունը:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Սուրբ Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ես ցանկանում եմ մի անգամ ևս իմ սրտաբուխ շնորհակալությունը հայտնել այն



Դոկտ. Հովհաննես Լեփսիուս

ս. պատարագի համար, որին ես ներկա գտնվեցի սույն տարվա 7 սեպտեմբերին, Ս. Էջմիածնի տաճարում:

Թեպետև ես չէի հասկանում հայերեն լեզվով խոսված քարոզը, սակայն ես քահանայի դեմքից հասկացա, որ նա ինչպիսի՜ հավատքով և ներշնչմամբ էր խոսում Ս. վետարանում «հինգ հազարի կերակրման» հրաշքի մասին:

Քարոզիչը Հիսուս Քրիստոսի այս պատվիրանին ճանաչելը մեծ փորձառություն եղավ:

Որքան հրաշալի է եկեղեցիների ինքնատիպ ճարտարապետությունը և որքան հիանալի էր հնչում երաժշտությունը այդ սուրբ հարկի տակ: Ինչպիսի խնամքով և սիրով է պահպանել հայ ժողովուրդը իր մեծարժեք մշակույթը հազարամյակների ընթացքում:

Այդ օրը Էջմիածնում միշտ կենդանի պիտի մնա իմ մեջ իբրև ճառագայթող մի ապրում:

Խորին հարգանք և սրտագին երախտագիտությամբ,

Ձեզ ներկայ՝

ՎԵՐՈՆԻԿԱ ԼԵՖՍԻՈՒՍ

19 նոյեմբեր 1980

մությանն ընթացքում հիշատակում էր նաև իմ հորը, որը, ինչպես գիտեք, իր ողջ կյանքը Քրիստոսի հետևողությամբ էր ապրել: Հուզիչ էր ինձ համար, որ նա աղոթում էր այդ պահին նաև իմ հոր հոգու համար:

Այս երախտագիտությունը մեծարժեք մի նշան է հայ ժողովրդի ներքին հատկանիշի, որն իմ հայրն էլ միշտ գնահատել էր:

Ինձ համար Հայաստանը և նրա ժողո-

---

19. 11. 1980

An S.H. Vasgen I Katholikos
aller Armenier, Etchmiadzin.

Euer Heiligkeit möchte ich noch einmal meinen innigsten Dank aussprechen für den Gottesdienst in der Kirche von Etchmiadzin, den ich am 7. September dieses Jahres miterleben durfte.

Obwohl ich die armenische Predigt nicht verstehen konnte, sah ich dem Priester an, mit welcher Überzeugung und Hingabe er über die Speisung der fünftausend sprach. Und daß er bei dieser Erzählung von Jesus Christus auch meines Vaters gedachte, der ja sein ganzes Leben in der Nachfolge Christi lebte, war für mich ergreifend, auch daß für die Seele meines Vaters gebetet wurde.

Diese Dankbarkeit ist ein hohes Zeichen der inneren Qualität des armenischen Volkes, die auch mein Vater immer erkannt hat.

Es war für mich ein großes Erlebnis, Armenien und seine Menschen kennen zu lernen – wie wundervoll ist die einzigartige Architektur der Kirchen, und wie wundervoll erklang die Musik in dem heiligen Raum. Mit welcher Sorgfalt und Liebe bewahren die Armenier ihr hohes Kulturgut durch Jahrtausende.

Dieser Tag in Etchmiadzin wird immer als ein strahlendes Erlebnis in mir lebendig bleiben.

Hochachtungsvoll
mit herzlicher Dankbarkeit

Ihre ergebene

Veronika Lepsius.